ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 20.11.2023թ. գրության՝ Նորքի անտառների վերականգնման ծրագրի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը հանձն է առել Նորքի բարձունքներում շուրջ 10 հեկտարի վրա իրականացնել անտառհիմնման և անտառվերականգման աշխատանքներ: Կազմակերպության որդեգրած քաղաքականության հիման վրա ուրբան անտառների շարունակական հիմնումը Երևան քաղաքում նպատակաուղղված է շրջակա միջավայրի պահպանմանը, միկրոկլիմայի ձևավորմանը և բնակչության սոցիալական կյանքի բարելավմանը:

Նորքի բարձունքներում անտառհիմնման և անտառվերականգման աշխատանքների կատարման համար կազմակերպությունը ներգրավել է մասնագիտական կառույցների հեղինակավոր ներկայացուցիչների, ովքեր իրականացնում են համապարփակ և խորը ուսումնասիրություններ տվյալ տարածքում: Անտառհիմնման և անտառվերականգման աշխատանքների գիտականորեն հիմնավորված իրականացման համար առաջնահերթություն է տրվում անտառապատման ենթակա տարածքներում հողագրունտի ֆիզիկոքիմիական հատկանիշների բացահայտմանը՝ լաբորատոր անալիզների միջոցով և ստացված տվյալների հիման վրա կատարված հողագիտական եզրակացության հիմնավորմանը: Ուստի, արդեն իսկ ՀԱԱՀ-ի «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն»-ի կողմից իրականացվել են նմուշառման աշխատանքներ, որոնք ընդգրկել են տվյալ տարածքի տարբեր կողմնադրության և դիրքադրության հատվածներ՝ ամբողջական վերլուծություն իրականացնելու նպատակով: Ակնհայտ է, որ տեղի հողային ռեսուրսներն աչքի են ընկնում անստրուկտուր մեխանիկական կազմով, սակավ բերրիությամբ և մակրո սննդատարրերով ապահովվածությամբ, ինչպես նաև անբավարար օդաջրաթափանցելիությամբ:

Հողագիտական վերլուծությունները հիմնաքար են հանդիսանում տվյալ տարածքում անտառհիմնման և անտառվերականգման աշխատանքների համար՝

ծառաթփային բույսերի տեսակային կազմի ընտրության և տնկման սխեմայի նախագծման նպատակով, որի մասով էլ իրականացվել է համապատասխան տեսականու ընտրություն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ աշխատանքները երկարաձգվել են՝ պայմանավորված անտառտնկման ենթակա տարածքում մայր ջրատարին ոռոգման ցանցի միացման և աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված գնման ընթացակարգի չկայացմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ